ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 144-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14<sup>3</sup> հոդվածով, հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գյուղ Չկալովկա, 4-րդ փողոց, 30 տան բնակիչ Սուրիկ Ղուկասյանի դիմումը՝ ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 47 շենքի հյուսիսային հատվածում՝ ավտոտնակների շարքում, ինքնական կառուցված 25.64քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սուրիկ Հակոբի Ղուկասյանի կողմից՝ ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 47 շենքի հյուսիսային հատվածում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնական կառուցված 25.64քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 20.94քմ/ և 25.64քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Սուրիկ Ղուկասյանի կողմից ինքնական կառուցված 25.64քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023SN8JU3/ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 42 / 33 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնական կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնական կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2024թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, [sevan.gegharkunik@mta.gov.am](mailto:sevan.gegharkunik@mta.gov.am)

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 145-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14<sup>3</sup> հոդվածով, հիմք ընդունելով ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 170 / 1ա բնակարանի բնակիչ Լիլիկ Հարությունյանի դիմումը՝ ք. Սևան, Աբովյան փողոց թիվ 3 շենքի արևելյան հատվածում՝ ավտոտնակների շարքում, ինքնակամ կառուցված 111.8քմ մակերեսով երկհարկանի տնտեսական շինությունն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Լիլիկ Կազբեկի Հարությունյանի կողմից՝ ք. Սևան, Աբովյան փողոց թիվ 3 շենքի արևելյան հատվածում՝ ավտոտնակների շարքում, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 111.8քմ մակերեսով երկհարկանի տնտեսական շինությունը /ներքին մակերեսը՝ 100.56քմ/, զբաղեցրած 55.9քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Լիլիկ Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված 111.8քմ մակերեսով երկհարկանի տնտեսական շինությունը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023UKELM9/ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Խ. Աբովյան փողոց թիվ 3 / 2 տնտեսական շինություն հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2024թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, [sevan.gegharkunik@mta.gov.am](mailto:sevan.gegharkunik@mta.gov.am)

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 146-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14<sup>3</sup> հոդվածով, հիմք ընդունելով ք. Սևան, գ. Գազարին, Գայի փողոց թիվ 3 / 24 բնակարանի բնակիչ Սուսաննա Կոստանյանի դիմումը՝ ք. Սևան, գ. Գազարին, Պիոներների փողոց թիվ 2 շենքի արևելյան հատվածում՝ ինքնակամ կառուցված 21.3քմ մակերեսով խորդանոցն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սուսաննա Հրանտի Կոստանյանի կողմից՝ ք. Սևան, գ. Գազարին, Պիոներների փողոց թիվ 2 շենքի արևելյան հատվածում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 21.3քմ մակերեսով խորդանոցը /ներքին մակերեսը՝ 18.51քմ/ և 21.3քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Սուսաննա Կոստանյանի կողմից ինքնակամ կառուցված 21.3քմ մակերեսով խորդանոցը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023AVAJLL/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, գյուղ Գազարին, Պիոներների փողոց թիվ 2 / 1 խորդանոց հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2024թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, [sevan.gegharkunik@mta.gov.am](mailto:sevan.gegharkunik@mta.gov.am)

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 147-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14<sup>3</sup> հոդվածով, հիմք ընդունելով ք. Սևան, Չարենցի փողոց 2 տան բնակիչ Մովսես Մկրտչյանի դիմումը՝ ք. Սևան, Շիրազի փողոց թիվ 20 բնակելի տան հյուսիսային հատվածում՝ ինքնակամ կառուցված 24.9քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Մովսես Ալեքսանի Մկրտչյանի կողմից՝ ք. Սևան, Շիրազի փողոց թիվ 20 բնակելի տան հյուսիսային հատվածում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 24.9քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 19.9քմ/ և 24.9քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Մովսես Մկրտչյանի կողմից ինքնակամ կառուցված 24.9քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023S2FBNJ/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Հ. Շիրազի փողոց թիվ 20 / 1 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2024թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նախրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, [sevan.gegharkunik@mta.gov.am](mailto:sevan.gegharkunik@mta.gov.am)

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 148-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14<sup>3</sup> հոդվածով, հիմք ընդունելով ք. Սևան, Նախրյան փողոց թիվ 24 / 27 բնակարանի բնակիչ Կարինե Բարսեղյանի դիմումը՝ ք. Սևան, Նախրյան փողոցի թիվ 14 շենքի հարավային հատվածում՝ ավտոտնակների շարքում, ինքնակամ կառուցված 51.55քմ մակերեսով ավտոտնակը, 12.95քմ մակերեսով խորդանոցը և 13.96քմ մակերեսով ծածկն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունները կառուցված են համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որոնց նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցների պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Կարինե Վլադիմիրի Բարսեղյանի կողմից՝ ք. Սևան, Նախրյան փողոցի թիվ 14 շենքի հարավային հատվածում՝ ավտոտնակների շարքում, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 51.55քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 41.28քմ/, 12.95քմ մակերեսով խորդանոցը /ներքին մակերեսը՝ 11.03քմ/, 13.96քմ մակերեսով ծածկը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 78.5քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Կարինե Բարսեղյանի կողմից ինքնակամ կառուցված 51.55քմ մակերեսով ավտոտնակը, 12.95քմ մակերեսով խորդանոցը և 13.96քմ մակերեսով ծածկը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023FMRBGF/ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նախրյան փողոց թիվ 14 / 5 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2024թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 149-Ա


### ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Նաիրա Ղազարյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության վկայագրի իրեն պատկանող և Չկալովկա համայնքի տնտ. թիվ 1 գրքի թիվ 63 քաղվածքի համաձայն՝ Նաիրա Ղազարյանին, Կորյուն, Աղավնի և Անի Կարապետյաններին պատկանող, անհատական բնակելի տան կառուցման համար սեփականաշնորհված 1350քմ մակերեսով հողատարածքը, հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության վկայագրի Նաիրա Ղազարյանին պատկանող և Չկալովկա համայնքի տնտ. թիվ 1 գրքի թիվ 63 քաղվածքի համաձայն՝ Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար Նաիրա Թարիբեկի Ղազարյանին /ծնված՝ 27.07.1965թ./, Կորյուն Ռոբերտի Կարապետյանին /ծնված՝ 18.09.1987թ./, Աղավնի Ռոբերտի Կարապետյանին /ծնված՝ 09.02.1989թ./, Անի Ռոբերտի Կարապետյանին /ծնված՝ 22.02.1990թ./ սեփականաշնորհված և նրանց կողմից փաստացի օգտագործվող 1330.4քմ հողատարածքի նկատմամբ ճանաչել Նաիրա Ղազարյանի, Կորյուն, Աղավնի, Անի Կարապետյանների սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Չկալովկա, 2-րդ փողոց, 3-րդ նրբանցք թիվ 5 հողամաս հասցե :
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 150-Ա


### ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Թամարա Պետրոսյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Թամարա Պետրոսյանին տրամադրել նախագծման թույլտվություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Դմաշեն, 1-ին փողոց, 4-րդ նրբանցք թիվ 2 հասցեում բնակելի տան կառուցման համար:
2. Թամարա Պետրոսյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 151-Ա

### ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Արմեն Հարությունյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Արմեն Հարությունյանին տրամադրել նախագծման թույլտվություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Զովաբեր, 2-րդ փողոց, 2-րդ փակուղի թիվ 2 հասցեում ավտոտնակով երկհարկանի բնակելի տան և հողամասի պարագծով պարսպի կառուցման համար:
2. Արմեն Հարությունյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 152-Ա


### ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Ալիկ Գրիգորյանի լիազոր անձ Կարեն Չիլինգարյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Ալիկ Գրիգորյանի լիազոր անձ Կարեն Չիլինգարյանին տրամադրել նախագծման թույլտվություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 3 / 4 հասցեում ավտոտնակի քանդման, ավտոտնակի և երկրորդ հարկում տնտեսական շինության կառուցման համար :
2. Ալիկ Գրիգորյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 153-Ա


### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «ՍՏԵՄԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Միեր Ստեփանյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «ՍՏԵՄԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Միեր Ստեփանյանի տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 10 հասցեում գտնվող առևտրի սրահին կից՝ կիսանկուղային հարկով կցակառույցի կառուցման համար:
2. «ՍՏԵՄԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Միեր Ստեփանյանը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «ՍՏԵՄԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Միեր Ստեփանյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 154-Ա


### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Լիդա Խալաֆյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք.Սևան, Շինարարների փողոց թիվ 3 / 26-39 հասցեում գտնվող առևտրի սրահին կից՝ երկհարկանի նկուղային մասով առևտրի սրահի կառուցման համար Լիդա Խալաֆյանին տրամադրված Սևան համայնքի ղեկավարի՝ 28.06.2021թ. N33 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 6 ամիս ժամկետով:
2. Լիդա Խալաֆյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 155-Ա


### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Արմեն Վարդանյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք.Սևան, Նալբանդյան փողոց թիվ 51 / 24 հասցեում ավտոտեխսպասարկման կետի կառուցման համար Սևան համայնքի ղեկավարի որոշմամբ Արմեն Վարդանյանին տրամադրված 21.04.2022թ. N14 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 6 ամիս ժամկետով:
2. Արմեն Վարդանյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ


17 հունվարի 2024 թվականի թիվ 156-Ա

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Ռաֆայել Վարդանյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ռաֆայել Վարդանյանին տրամադրել շինարարության թույլտվություն ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 27 / 29 հասցեում գտնվող բնակարանին կից կցակառույցի կառուցման համար:
2. Ռաֆայել Վարդանյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Ռաֆայել Վարդանյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 157-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 25.12.2023Թ.

N 2120-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 25.12.2023թ. «Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի տնօրինման մասին» N 2120-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
- 1) «1քմ՝ 1673 դրամ» բառերի փոխարեն կարդալ «1քմ՝ 1969դրամ» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.ghgharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 158-Ա

### ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 29.06.2023Թ. N 850-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 29.06.2023թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 850-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 159-Ա


### ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 30.08.2023Թ. N 1212-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 30.08.2023թ. «Բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին» N 1212-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝
  - 1) «63.71քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը՝ 52.55քմ» բառերի փոխարեն կարդալ՝ «63.71քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 52.55քմ/ բառերը:
  - 2) «49.65քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 40.70քմ/» բառերից հետո կարդալ՝ «5.94քմ մակերեսով նկուղը / ներքին մակերեսը՝ 4.11քմ/» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 160-Ա


### ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆՔՆԱԿԱՄ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Դմաշեն, 1-ին փողոց թիվ 14 տան բնակիչ Աշոտիկ Մովսիսյանի դիմումը՝ Դմաշեն համայնքի հողային բարեփոխումների սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 20.04.1992թ. թիվ N 12 նիստի որոշմամբ Հասմիկ Մաթևոսյանին, Աշոտիկ, Փայլակ և Նունե Մովսիսյաններին հատկացված 1200հա մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված կիսակառույց բնակելի նշանակության շինությունները ինքնակամ ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Դմաշեն համայնքի հողային բարեփոխումների սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 20.04.1992թ.-ի թիվ N 12 նիստի որոշմամբ Գեղարքունիքի մարզի Դմաշեն գյուղում անհատական բնակելի տան կառուցման համար Աշոտիկ Փայլակի Մովսիսյանին /ծնված՝ 1959թ./, Հասմիկ Լևոնի Մաթևոսյանին /ծնված՝ 1962թ./, Փայլակ Աշոտիկի Մովսիսյանին /ծնված՝ 1982թ./ և Նունե Աշոտիկի Մովսիսյանին /ծնված՝ 1984թ./ սեփականաշնորհված, նրանց կողմից փաստացի օգտագործվող 0.11846հա մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Հասմիկ Մաթևոսյանի, Աշոտիկ, Փայլակ և Նունե Մովսիսյանների սեփականության իրավունքը:
2. Սեփականության իրավունքով Հասմիկ Մաթևոսյանին, Աշոտիկ, Փայլակ և Նունե Մովսիսյաններին պատկանող 0.11846հա մակերեսով հողատարածքում 1994թ. կառուցված 180.1քմ մակերեսով կիսակառույց շինությունը /ներքին մակերեսը՝ 153.62քմ/ ճանաչել ինքնակամ շինություն՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Դմաշեն, 11-րդ փողոց թիվ 30 կիսակառույց շինություն հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 161-Ա


### ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Սևան համայնքի ավագանու՝ 15.02.2023թ. N 9-Ա և 10-Ն որոշումներով, հիմք ընդունելով 16.01.2024թ. կայացած աճուրդ-վաճառքի արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ.Լճաշեն, 18-րդ փողոց, 30 հողամաս հասցեում գտնվող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող, բնակելի կառուցապատման 969.4քմ մակերեսով հողատարածքը, ըստ աճուրդ-վաճառքի արդյունքների, 1քմ՝ 811.83 դրամ, օտարել աճուրդում հաղթող ճանաչված Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ.Լճաշեն, 22-րդ փողոց, 13 շենք, 1 բնակարանի բնակիչ Խոսրով Վարդանի Ղազարյանին:
2. Սակարկությունների ժամանակ ձևավորված գինը գնորդի կողմից 10 օրվա ընթացքում համայնքի բյուջե մուծելու դեպքում՝ վերջինիս հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2024 թվականի թիվ 162-Ա


### ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Սևան համայնքի ավագանու՝ 15.02.2023թ. N 9-Ա և 10-Ն որոշումներով, հիմք ընդունելով 16.01.2024թ. կայացած աճուրդ-վաճառքի արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ս. Շահումյան փողոց թիվ 8 / 45 հողամաս հասցեում գտնվող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող, բնակելի կառուցապատման 35քմ մակերեսով հողատարածքը, ըստ աճուրդ-վաճառքի արդյունքների, 1քմ՝ 2966.057 դրամ, օտարել աճուրդում հաղթող ճանաչված Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք.Սևան, Շահումյան փողոց 10 / 11 բնակարանի բնակիչ Տիգրան Իշխանի Գնդոյանին:
2. Սակարկությունների ժամանակ ձևավորված գինը գնորդի կողմից 10 օրվա ընթացքում համայնքի բյուջե մուծելու դեպքում՝ վերջինիս հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2024 թվականի հունվարի 17  
ք.Սևան





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

18 հունվարի 2024 թվականի թիվ 163-Ա


### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14<sup>3</sup> կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. 2387-Ն որոշմամբ, ՀՀ վարչապետի՝ 13.08.2001թ. N 599-Ա որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերտեսչական հանձնաժողովի՝ 27.05.2021թ. թիվ 128 դրական եզրակացությունը և հիմք ընդունելով «ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Արմեն Սիմիկյանի դիմումը՝ սեփականության իրավունքով «ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Զովաբեր հասցեում գտնվող 1.11835հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Զովաբեր հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 05-035-0122-0007/, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության 1.11835հա մակերեսով հողատեսքի նպատակային նշանակությունը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերի, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի՝ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու համար և տրամադրել Սևան համայնք, գ. Զովաբեր թիվ 2 հողամաս հասցե:
2. «ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ Սևան համայնքի բյուջեի 900165101255 հաշվհամարին վճարել հողամասերի կադաստրային արժեքի՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 5458108դրամ:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2024 թվականի հունվարի 18  
ք.Սևան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, [sevan.gegharkunik@mta.gov.am](mailto:sevan.gegharkunik@mta.gov.am)

### ՈՐՈՇՈՒՄ


18 հունվարի 2024 թվականի թիվ 164-Ա

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14<sup>3</sup> կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. 2387-Ն որոշմամբ, ՀՀ վարչապետի՝ 13.08.2001թ. N 599-Ա որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերտեսչական հանձնաժողովի՝ 27.05.2021թ. թիվ 128 դրական եզրակացությունը և հիմք ընդունելով «ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Արմեն Սիմիկյանի դիմումը՝ սեփականության իրավունքով «ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Զովաբեր հասցեում գտնվող 0.5103հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Զովաբեր հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 05-035-0122-0005/, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության 0.5103հա մակերեսով հողատեսքի նպատակային նշանակությունը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերի, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի՝ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու համար և տրամադրել Սևան համայնք, գ. Զովաբեր թիվ 5 հողամաս հասցե:
2. «ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ Սևան համայնքի բյուջեի 900165101255 հաշվհամարին պետք է վճարել հողամասերի կադաստրային արժեքի՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 2302984դրամ:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2024 թվականի հունվարի 18  
ք.Սևան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

18 հունվարի 2024 թվականի թիվ 165-Ա


### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14<sup>3</sup> կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. 2387-Ն որոշմամբ, ՀՀ վարչապետի՝ 13.08.2001թ. N 599-Ա որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերտեսչական հանձնաժողովի՝ 27.05.2021թ. թիվ 128 դրական եզրակացությունը և հիմք ընդունելով «ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Արմեն Սիմիկյանի դիմումը՝ սեփականության իրավունքով «ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Զովաբեր հասցեում գտնվող 0.62331հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Զովաբեր հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 05-035-0122-0010/, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության 0.62331հա մակերեսով հողատեսքի նպատակային նշանակությունը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերի, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի՝ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու համար և տրամադրել Սևան համայնք, գ. Զովաբեր թիվ 1 հողամաս հասցե:
2. «ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ Սևան համայնքի բյուջեի 900165101255 հաշվհամարին վճարել հողամասերի կադաստրային արժեքի՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 3042065դրամ:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2024 թվականի հունվարի 18  
ք.Սևան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք  
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

18 հունվարի 2024 թվականի թիվ 166-Ա


### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

